3126

ЗКП 5
2 - 22

1638
Ժ 2001

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք!

**ԳԱՂՏՆԻ**

# ՀԱՄ. Կ (Բ) Կ. ԿԵՆՏԿՈՄԻ ՆԱՄԱԿԸ ԲՈԼՈՐ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԻՍՑԻՊԼԻՆԱՅԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հ. Կ. (Բ) Կ. Կենտկոմի հրատարակություն
Յերեվան — 1929

2010
КП5
2-22

Գրառեպ. № 1106 (բ) Տիրաժ 250

Հայպոլիգրաֆի 2-րդ տպ. պատ. № 2632

-22

# ԱՄԿ(Բ.)Կ. ԿԵՆՏԿՈՄԻ ՆԱՄԱԿԸ ԲՈԼՈՐ ՈՒՍ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ՝ ԱՇ-ԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԻՍՑԻՊԼԻՆԱՅԻ ԲԱՐՁՐԱՑ-ՄԱՆ ՄԱՍԻՆ

Ժողովրդական տնտեսության սոցիալիստա-ան վերակառուցման և յերկրի ինդուստրալի-ացիայի տեմպը ապահովելու վերաբերմամբ, ուսակցության կողմից տրված խնդիրները պա-անջում են յերկրի բոլոր ստեղծագործ ուժերի արումը և բացառիկ ուշադրություն աշխատան-ի արտադրողականության բարձրացման և աշ-ատանքային դիսցիպլինայի ամրապնդման նդիրների վրա։

Մինչդեռ աշխատանքի արտադրողականու-յան անբավարար դրությունը և աշխատան-ային դիսցիպլինայի թուլացումը, վոր գոյու-յուն ունեն մեր ձեռնարկներում, լուրջ ահա-անգ են հնչեցնում, ինչպես արդյունաբերու-յան ընդհանուր ծրագրի կիրառման նկատ-ամբ այս տնտեսական տարում, նույնպես և ատկապես ինքնարժեքի իջեցման առաջադրու-յան հաջող կիրառման նկատմամբ։

Տնտեսական ծրագրի կատարելապես չկիրառելը վելի սրում են այս տարվա տնտեսական դըժ-արությունները, վտանգ են ստեղծում սոց. շի-արարության հետագա զարգացման և բանվոր



477 1638 2001

դասակարգի նյութական բարեկեցության հա մապատասխան ապահովման համար։

Այդ պատճառով էլ աշխատանքի արտա դրողականության բարձրացման և աշխատան դիսցիպլինայի բարձրացման խնդիրները նե կայումս շատ ավելի քան առաջ, կարևորագու ճակատ են հանդիսանում, կուսակցությ խորհրդային և պրոֆեսիոնալ կազմակերպ թյունների համար։

Աշխատանքի դիսցիպլինայի այսպիսի դր թյունը հետևանք է այն բանի, վ ր կուս և պր որգանները հատուկ ուշադրություն չեն դար րել այս խնդրի վրա այլ և աշխատանքի ու ար կոմիսարիատները աշխատանքային դիսցիպլ նան ապահովելու համար մղվող պայքար պետք չեղած ուժանդակությունը չեն ցու ավել։

Առանձին ուշադրություն պետք է դար նել աշխատանքային դիսցիպլինայի անկման մեծ մասամբ գյուղի հետ կապված, բանվորն րի նոր խավերին արդյունաբերության մեջ նե գրավելու միջև չեղած կապի վրա։ Դրա հետ վանքով շատ դեպքերում բանվորների այդ խ վերի վրա իշխում են գյուղացիական տրամ դրությունները և սեփական տնտեսության շ հերը։ Անբավարար կապված լինելով արտա դրության հետ նրանք ավելի դժվարությամբ յենթարկվում գործարանի վերամշակման (նր հոգեկան աշխարհի նկատմամբ) և դանդաղ յուրացնում արտադրությանն անհրաժեշտ ա խատանքային դիսցիպլինան։



Բ 2001

Աշխատանքային դիսցիպլինայի խախտ- ման ամենածանր դեպքերն ընկնում են բան- վորների այդ խավի վրա։ Առանձին դեպքերում խուլիգանության հողի վրա նոր ընդունված բանվորների կողմից նկատվում են բացարձակ նաարարության բնույթ ունեցող դեպքեր, վո- րանք շատ հեռու չեն գնում սովորական անփու- թությունից և աշխատանքային դիսցիպլինայի խախտումից։

Պակաս կարևոր նշանակություն չունի աշ- խատանքային դիսցիպլինայի անկման գործում նաև վարչական-տեխնիկական ղեկավարության թուլացումը, ինչպես ինժեներա-տեխնիկական պերսոնալի, նույնպես էլ ընդհանրապես գոր- ծարանի վարչության, դիրեկտորների և տնտե- սական մարմինների կողմից։

Ձեռնարկությունների վարչությունները չափազանց թույլ կերպով են օգտագործում այն իրավունքները, որ տրված են նրանց օրենքով և ներքին կանոնադրությամբ՝ աշխատանքային դիսցիպլինայի բարձրացման համար։ Դեռ ավե- լին, մի շարք ձեռնարկություններում նկատ- վում է յերկիշխանություն (բջիջը, գործարկոմը, ադմինիստրացիան), վորը արմատապես կազմա- լուծման է յենթարկում աշխատանքը—արտա- դրության նկատմամբ։

Դեռ ևս կուս. 11-րդ համագումարը գտնում էր, որ խոշոր արդյունաբերության վերական- գնման հաջողությունը, «Պահանջում է ԽՍՀՄ ներկա պայմաններում ամբողջ իշխանության



ՀՍՍՀ ... Гос. Библиотека ЗССР-Арм.ССР им. А. Мясникяна ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
84744-ա
1024-91

լիակատար կենտրոնացումը գործարանի վա
չության ձեռքում»։ Գործարանային վարչու
թյունները կազմվում են միանձնության սկզ
բունքներով, ընդ վորում «արհմիություններ
ամեն մի անմիջական միջամտություն ձեռնա
կի կառավարման մեջ այդ պայմաններում պետ
է համարվի անպայման վնասակար և անթու
լատրելի»։ Կուսակցության 14-րդ համագումար
նորից ընդգծեց, վոր պրոֆմիությունները պետ
է «վճռական պայքար տանեն իրենց օրգաննե
րի և ներկայացուցիչների կողմից ձեռնարկու
թյունների և նրանց խմբերի կառավարման գոր
ծին, անմիջական և վոչ կոմպետենտ միջամտու
թյուն ցույց տալու փորձերին, վորոնց հետե
վանքը լինում է միութենական ֆունկցիաների
շփոթումը տնտեսականի հետ և վնասակար յերկ
վության ու անպատասխանատվության մուտք
գործելը ժող. տնտեսության ղեկավարման գոր-
ծի մեջ»։

Այս դրությունները ամբողջովին պահպա-
նում են իրենց ուժը և ավելի խոշոր նշանակու-
թյուն են ստանում ընթացիկ շրջանի համար։
Կուսակցական կազմակերպության մոտ ժամա-
նակվա խնդիրն է տեղերում վճռականորեն կյան-
քում կիրառել վերադաս կուսակցական օրգան-
ների մատնանշված վորոշումները։ Դրա հետ
միասին կուսակցության մարմինները պետք է
իրենց կողմից ամեն միջոցները ձեռք առնեն
ստեղծելու առողջ մթնոլորտ ձեռնարկություն-
ներում, վորը կապահովի վարչության համար



իակատար հնարավորություն կատարելու իր
ֆունկցիաները։ Սակայն չպետք է մոռանալ,
վոր «Միանձնությունը չի բացառում լայն մաս-
սաների ներգրավումը կառավարման գործում,
միանձնությունը միայն սահմանավորում է ան-
միջական ղեկավարման ֆունկցիաները սովո-
րեցնելուց»։

Պրոֆմիությունները մասնակցում են բո-
լոր տնտեսական և պետական օրգանների կազ-
մությանը, վորոնք կապված են տնտեսության
հետ, առաջադրելով իրենց թեկնածուները, մաս-
նանշելով նրանց ստաժը, փորձը և այլն։

Հարցի լուծումը պատկանում է բացառա-
պես տնտեսական մարմիններին, վորոնք և կրում
են ամբողջ պատասխանատվությունը այդ աշ-
խատանքի համար։ Տնտեսական մարմինները
ուշադրության են առնում համապատասխան
պրոֆմարմինների կողմից տրվող գնահատականը
բոլոր թեկնածուների նկատմամբ (ՌԿ(բ)Կ 11-րդ
համագումարը)։

Ընկ. Լենինը և մեր կուսակցությունը շատ
անգամ մատնանշել են, վոր հաղթական սոցիա-
լիստական շինարարության համար հսկայական
նշանակություն ունի, նոր աշխատանքային
դիսցիպլինան, վորը հիմնված է աշխատանքի
նոր կազմակերպության վրա, աշխատանքի, վորը
միացնում է կապիտալիստական տեխնիկայի և
գիտության վերջին խոսքը գիտակից աշխատող-
ների մասսայական համախմբման հետ, վորոնք
ստեղծագործում են սոցիալիստական խոշոր ար

տագրությունը»: Դրա հետ միասին ընկ. Լենինը իրեն հատուկ խստությամբ ընդգծում է շկուրնիկների և պրոլետարական դիսցիպլինայի խախտողների դեմ անխնա պայքար մղելու անհրաժեշտությունը: «Մեր հիմնական լոզունգն է ավելի մոտ միանձնությունը, ավելի շատ աշխատանքային դիսցիպլինա, ձգվել աշխատել ռազմական տոկունությամբ, վճռականությամբ, անձնազոհությամբ, թողնելով խմբակային, ցեխային շահերը, զոհ բերելով բոլոր մասնավոր շահերը. առանց դրան հաղթանակել չենք կարող»:

«Բանվորները ամեն տեսակ զոհ տալիս են և ստեղծում դիսցիպլինա, որը ստիպում է տեսել և զգալ, որ դասակարգային շահերը ավելի բարձր են ցեխային շահերից: Իսկ այն բանվորները, որոնք չեն կամենում այս զոհաբերությունը կատարել, մեր կողմից դիտվում են որպես շկուրնիկներ և մենք դուրս կը գցենք նրանց պրոլետարական ընտանիքից»:

Պայքար՝ աշխատանքային դիսցիպլինայի համար այս պայմաններում դառնում է պայքար ոչ միայն աշխատանքի արտադրողականության բարձրացման համար, այլ փաստորեն ներկայումս հաղթանակում է նաև պայքար պոչականության դեմ՝, աշխատանքի հարցերում:

Աշխատանքային դիսցիպլինայի բարձրացման խնդիրների լուծման մեջ հսկայական նշանակություն է ստանում բանվոր դասակարգի և նրա պրոֆմիությունների կազմակերպող դերը: Բանվոր դասակարգի լայն մասսաների և նրա



կազմակերպությունների դիտակից և ակտիվ մասնակցությունից են կախված կատարելապես աշխատանքային դիսցիպլինայի բարձրացման գործում՝ մեր հաջողությունները:

Պրոֆմիությունները վճռական կերպով պայքարելով տնտեսական օրգանների բյուրոկրատական աղավաղումների դեմ, յեռանդուն կերպով պաշտպանելով բանվորների տնտեսական և կենցաղային շահերը, հենվելով պրոլետարների ամենագիտակից տարրերի վրա, պետք է ամենավճռական պայքար տանեն արտադրության և աշխատանքային դիսցիպլինային անտարբեր վերաբերմունք ցույց տալու դեմ (Կուս. կոնֆերենցիայի բանաձևից):

Այս խնդիրների ռեալ իրագործման նպատակով ՀԱՄԿ (բ)Կ Կենտկոմը կուս. կազմակերպություններին առաջարկում է՝

1) Մոբիլիզացիայի յենթարկել լայն բանվորական մասսաները՝ պայքարելու արտադրողականության բարձրացման, աշխատանքային դիսցիպլինայի ամրապնդման, բանթողների (պրոգուլով) վերացման, սարքավորմանը, գործիքներին, մեխանիզմներին անփույթ վերաբերմունք ցույց տալը արմատախիլ անելու համար, առանձին ուշադրություն դարձնելով ձեռնարկության մեջ ստեղծելու այնպիսի բարոյական մթնոլորտ, որ բանթողները (պրոգուլշչիկ) և աշխատանքային դիսցիպլինան խախտողները զգան բարոյապես դատապարտված և մեկուսացված ընկերական շրջապատի մեջ:

2) Կուս կազմակերպությունները պետք է ուժեղացնեն դաստիարակչական աշխատանքները կուսակցության անդամների մեջ այնպես, որ կոմունիստները և կոմյերիտականները բանվորության առաջավոր կադրերի հետ միասին լինեն նախաձեռնողներ այդ կարևորագույն ճակատում, գործնականում լինեն ամենակուլտուրական, արտադրողականորեն օրինակելի բանվորները, սոցիալիստական ռացիոնալիզացիայի և աշխատանքային դիսցիպլինայի համար մղվող պայքարի մեջ ներգրավելով բոլոր բանվորներին: Սակայն նկատվում են դեպքեր, երբ կոմունիստները և կոմյերիտականները չեն ըմբռնում աշխատանքային դիսցիպլինայի ամբողջ կարևորությունը և նշանակությունը, չեն պայքարում նրա խախտումների դեմ, թագնվում են հետամնաց բանվորների հետևում, որը միանգամայն անթույլատրելի պոչականություն է:

3) Ինքնարժեքի իջեցման և աշխատանքային դիսցիպլինայի բարձրացման մասին յեղած հրահանգները կյանքում կիրառելու համար մղվող պայքարը արտադրության մեջ իր ամբողջ ծանրությամբ առաջին հերթին ընկնում է տնտեսավարի, մասնագետի և տեխնիկական պերսոնալի վրա: Կուսակցական օրգանների և պրոֆեսիոնալ կազմակերպությունների խնդիրն է ապահովել (կառավարչի, դիրեկտորի) միանձնյա ղեկավարությունը, ձեռնարկության ոպերատիվ ղեկավարության բոլոր հարցերում, վարչությանն ամեն կերպ աջակցել, արտադրության բարելավման և վարչական-տեխնիկական պերսոնալի համար գործնական ընկերական մթնոլորտ ստեղծելու ձեռնարկության մեջ:



4) Պարտադրել կուս օրգաններին վճռական պայքար տանելու պոչական տրամադրությունների դեմ, որոնք յերևան են բերվում առանձին տնտեսավարների և պրոֆ աշխատողների, ինչպես նաև տեխնիկական և վարչական պերսոնալի կողմից և իրենց արտահայտությունն են գտնում աշխատանքային դիսցիպլինա հաստատելու գործում բավականաչափ տոկունություն չհայտնաբերելով:

5) Աշխատանքի արտադրողականության և ինքնարժեքի իջեցման գործում խոշոր դեր պետք է խաղա պրոֆմիությունների կուլտուր լուսավորական և տնտեսական աշխատանքը, հատկապես արտադրական խորհրդակցությունների և ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովների աշխատանքը:

Արտադրական խորհրդակցությունների աշխատանքը, բանվորական լայն մասսաներին արտադրության կազմակերպման և բարելավման գործի մեջ գրավելու ուղղությամբ, պետք է ուժեղացվի և մասնավորապես տարվի ինքնարժեքի իջեցման, արտադրողականության պակասների հայտնաբերման, պարապուրդի (պրաստոյ) և բռակի վերացման, բանթողների պակասեցման ուղղությամբ:

6) Կուսակցական օրգանները պետք է դատական օրգանների և աշխատանքի կոմիսարիա-

տի օրգանների ղեկավարության ընթացքում տանեն նրանց գործնեյությունը արտադրության մեջ համապատասխան աշխատանքային դիսցիպլինա ապահովելու ուղղությամբ, մասնավորապես ԽՍՀՄ Աշխժողկոմատի 1927 թ. հուլիսի 19-ի հաստատած ներքին կանոնադրությունը և գանձումների աղյուսակը պետք է իսկապես իրագործվեն կյանքում։ Միաժամանակ պետք է այնպես անել, որ տնտեսական օրգանները լիովին կիրառեն աշխատանքային օրենսդրության նորմաները և կոլլեկտիվ պայմանագրերի պայմանների հետ կապված պարտավորությունները։

7) Բանի որ մինչև այժմ ձեռնարկություններում նկատվում է այն յերևույթը, վոր բանվորները զանազան հասարակական պարտականություններ կատարում են (նիստեր, ժողովներ, անդամավճարների գանձում և այլն) աշխատանքի ժամերին, կատեգորիկ կերպով առաջարկել բոլոր գործարանային կազմակերպություններին վերացնելու նման յերևույթները, թողնելով հասարակական պարտականությունների կատարումը ճաշի ընդմիջումին, աշխատանքը սկսելուց առաջ և վերջացնելուց հետո յեղած ժամանակով, բացի այն անձնավորություններից, վորոնք սահմանված կարգով հատկապես ազատված են։

8) Նշելով աշխատանքային դիսցիպլինայի անկումը նաև ինժիներա-տեխնիկական պերսոնալի մեջ, իրենց ադմինիստրատիվ ֆունկցիաները չկիրառելու և աշխատանքային դիսցիպլի-



նան խախտողների նկատմամբ անուշադիր լինելու տեսակետից, կուսակցական մարմինների աշխատանքի մեջ առանձնապես կարևոր ճանաչել աշխատանքային դիսցիպլինայի ուժեղացումը ինժեներա-տեխնիկական պերսոնալի նկատմամբ, միաժամանակ ապահովելով նրանց համար իրենց վարչական ֆունկցիաները տեխնիկական բնույթ կրող կարգադրությունների կիրառման նկատմամբ և վարչական իրավունքների օգտագործումը ապահովելու համար։

Գիտակից, դասակարգայնորեն կայուն պրոլետարի աչքում պետք է լավ համարվի այն ինժիները, այն վարպետը, վորն ինքն է յերևան բերում նրա մեջ տեխնիկական ինիցիատիվան և աջակցում է բանվորների նախաձեռնությանը, մասնավորապես գյուտարար բանվորներին, վորն առաջ է տանում ռացիոնալիզացիայի գործը, նոր մեթոդներ է մտցնում, խիստ և անխախտ կերպով կիրառում է աշխատանքային դիսցիպլինան, ինքը հանդիսանում է դիսցիպլինայի օրինակ և պահանջում է անպայման դիսցիպլինարություն՝ իր բոլոր ստորադրյալներից։

Կուսակցական կազմակերպությունները պետք է խիստ կերպով հետևեն օբյեկտիվ և մանրամասն հետազոտելու այն մեղադրանքները, վորոնք բարդվում են ինժիներա-տեխնիկական աշխատողների վրա, առանձնապես մամուլում. պետք է վճռականապես վոչնչացնեն ներկայումս նկատվող անհիմն մեղադրանքները և սուր հակահարված տան վարչական-տեխնիկական աշ-

խատանքների նկատմամբ, նրանց կողմից աշխատանքային դիսցիպլինայի հաստատ կիրառման և իրենց պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար տեղի ունեցող հարձակումներին։

9) Կենտրոնական Կոմիտեն ուշադրություն է հրավիրում՝ առանձին բանվորների կողմից ինժեներա-տեխնիկական պերսոնալի նկատմամբ խուլիգանություն և բռնություն գործ դնելու բոլոր դեպքերի դեմ վճռական պայքար մղելու անհրաժեշտության վրա։ Բանվոր դասակարգը բավականաչափ ապահովված է ինժիներա-տեխնիկական պերսոնալին՝ օրենսդրական նորմանները աշխատանքի բնագավառում խախտելու և բանվորներին անպատվելու համար՝ պատասխանատվության յենթարկելու հնարավորությամբ։ Այդպիսի խուլիգանական յելույթների բոլոր տեսակի դեպքերը բանվորների կողմից ինժիներա-տեխնիկական պերսոնալի նկատմամբ պետք է անպայման դատի տրվեն, հանցավորներին վճռական պատժի յենթարկելու համար։ Հավասարապես պետք է աշխատել վորպեսզի այդպիսի գործողությունները հասարակական դատապարտության արժանանան իրենց բանվորների կողմից։

10) Ուժեղացնել մամուլում արտադրական նվաճումների և բացերի լուսաբանությունը, պարտադրելով պարբերական թերթերին և պատի լրագրերի խմբագրություններին միջոցներ ձեռք առնել՝ լուսաբանելու աշխատանքի արտադրողա-



կանության բարձրացման և աշխատանքային դիսցիպլինայի անկման դեմ մղվող պայքարի բոլոր խնդիրները, լայն կերպով ներգրավելով այդ աշխատանքին բանթղթակիցներին։ Միաժամանակ մամուլում պետք է լայն կերպով լուսաբանվեն աշխատանքի, աշխատանքային դիսցիպլինայի բարձրացման, աշխատանքի նկատմամբ ավելի մեծ հարգանք տածելու և այլ խնդիրները։

Մասսաների ստեղծագործ գործնական ինքնաքննադատությունը, վորպես բացերի ուղղման զենք և շինարարության հիմնական ճակատներում մեր աշխատանքին օգնող միջոց, պետք է հիմնականում տարվի աշխատանքի արտադրողականությունը և ինքնարժեքի իջեցումը խանգարող բոլոր արգելքները վերացնելու ուղղությամբ,—ցրվածության, թափթփվածության, լոդրության, աշխատանքային դիսցիպլինան խախտելու, արտադրողականությունը պակասեցնելու, պարապուրդի և բռակի դեմ, գիտակից տոկուն աշխատանքի համար բանվոր դասակարգի սոցիալիստական ձեռնարկություններում։

Կենտրոնական կոմիտեն գտնում է, վոր աշխատանքի արտադրողականության բարձրացման համար կիրառվող միջոցները պետք է միացվեն արտադրության ռացիոնալիզացիայի, բյուրոկրատիզմի ու վոլոկիտայի դեմ մղվող պայքարի սիստեմատիկ գործադրման հետ։ Վճռական մոմենտը, վոր պիտի ապահովի վերոհիշյալ ձեռնարկումների կիրառման հնարավորությունը,

հանդիսանում է բանվոր դասակարգի գիտակից վերաբերմունքը աշխատանքային դիսցիպլինայի բարձրացման հարցերին և կուսակցական կազմակերպությունների ակտիվ մասնակցությունը մասնանշված ձեռնարկումների կիրառման գործում.

Կենտրոնական կոմիտեն կուսակցական կազմակերպությունների աշխատանքը չափելու է այն հետևանքով, որ նրանք ձեռք կբերեն աշխատանքային դիսցիպլինան և արտադրողականությունը ձեռնարկություններում բարձրացնելու բանթողները արմատախիլ անելու, բանվորական մասսան սոցիալիստական աշխատանքային դիսցիպլինայի համար մղվող պայքարի մեջ հաջողությամբ ներգրավելու գործում:

Կենտրոնական Կոմիտեն բոլոր կուս մարմիններից պահանջում է վճռական կերպով կիրառել բոլոր ձեռնարկումները աշխատանքի արտադրողականության բարձրացման ասպարեզում:

Այս նամակը պետք է կարդալ կուսակցական ժողովներում, միաժամանակ բջիջներում մշակելով կոնկրետ ձեռնարկումներ աշխատանքային դիսցիպլինան բանձրացնելու ուղղությամբ:

ՀԱՄԿ (Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публ. Библиотека
2013
ՀՀ Ազգային գրադարան